Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիա
Հնագիտության և Ազգագրության ինստիտուտ

Հովսեփյան Ռուբեն Լեոնիդի

Միջնադարյան Արցախի գյուղատնտեսական մշակույթն ըստ Տիգրանակերտի պեղումների նյութերի

Է.00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
Սեղմագիր

Երևան – 2017

Институт археологии и этнографии
Национальной Академии Наук
Республики Армения

Овсепян Рубен Леонидович

Сельскохозяйственная культура средневекового Арцаха по материалам археологических раскопок Тигранакерта

Автореферат

диссертации на соискание ученой степени
кандидата исторических наук
по специальности 07.00.03«Археология»

Ереван - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆ. Հ. Լ. Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ. գ. դ., պրոֆ. Ի. Գ. Ղարիբյան

պ. գ. թ. Ա. Լ. Զոհրաբյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՊԹ Հնագիտության բաժին

Պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի հունիսի 13-ին, ժամը 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան-0025, Չարենցի 15)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում։

Սեղմագիրն առաքված է 2017 թ. մայիսի 13-ին։

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

Պատմական գիտությունների թեկնածու Հ. Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на ученом совете Института археологии и этнографии НАН РА

Научный руководитель: д. и. н., проф. Петросян Г. Л.

Официальные оппоненты: д. и. н., проф. Гарибян И. Г.

к. и. н. Зохрабян А. Л.

Ведущая организация: Отдел археологии МИА

Защита состоится 13 июня 2017 г. в 14:00 часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии НАН РА (адрес: Ереван-0025, ул. Чаренца 15).

Автореферат разослан 13 мая 2017 г.

Ученый секретарь специализированного совета,

Кандидат исторических наук Мелконян У. А.

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Արցախի Տիգրանակերտ քաղաքը[1] հիմնադրվել է մ. թ. ա. I դարում Տիգրան Բ Մեծ (մ. թ. ա. 95-55 թթ.) արքայի կողմից և գտնվում է Խաչենագետի ներքնահովտում, այնտեղ, ուր Արցախյան լեռնաշղթան ձուլվում է Արցախյան հարթավայրի հետ, և որտեղով հնում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող մոտավոր գծով իրարից բաժանվում էին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Քաղաքի հետքերը տարածվում են Խաչենագետից հարավ ընկած Վանքասար լեռան հարավարևելյան ներքնալանջի վրա և այդ լանջին կից գոգավորությունում գտնվող «Արքայական աղբյուրների» (Շահբուլաղ) հարևանությամբ և զբաղեցնում են մոտ 70 հա տարածք: Պեղումները վկայում են, որ քաղաքը հարատևել է մինչև XIII դարի վերջը[2]:

Տիգրանակերտ քաղաքի պեղումների արդյունքում վավերացվել են քաղաքի տնտեսությանը վերաբերող կառույցներ, աշխատանքային գործիքներ և հարմարանքներ, մթերքների վերամշակման և պահպանման համար գործածվող տարողություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրել Տիգրանակերտ քաղաքի տնտեսությունը և մասնավորապես գյուղատնտեսությունը թե՛ անտիկ շրջանում և թե՛ միջնադարում: Միջնադարյան տնտեսության վերականգնման համար հատկապես կարևոր են քաղաքի Կենտրոնական թաղամասի Վաղքրիստոնեական հրապարակում և Ամրացված թաղամասի վերևի հատվածում բացված բնակելի-տնտեսական համալիրների պեղումների նյութերը: Այս բնակելի-տնտեսական համալիրները կազմում են լավ արտահայտված երկու մշակութային շերտ՝ IX-XI և XII-XIII

---

[1]Շնորհակալություն եմ հայտնում արշավախմբի ղեկավար Համլետ Պետրոսյանին, ինչպես նաև Լյուբա Կիրակոսյանին, Ինեսա Կարապետյանին, Վարդգես Սաֆարյանին, Տատյանա Վարդանեսովային, Աղավնի Ժամկոչյանին, Ռուբեն Վարդանյանին, Արմինե Գաբրիելյանին, Ռոման Հովսեփյանին նյութերի տրամադրման, աջակցության և խորհուրդների համար:

[2]Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Ժամկոչյան Ա., Վարդանյան Ռ., Կարապետյան Ի., Վարդանեսովա Տ., Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (2005-2009 թթ.), Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ., Ստեփանակերտ, 2011 թ., էջ 7, Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365, Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ., Հակոբյան Հ., Կիրակոսյան Լ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները, ՀՀՄ XIV, Երևան, 2008, էջ 187-199, Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Մշակութային հետազոտություններն Արցախում. Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ, Երևան, 2009, էջ 25-27, Պետրոսյան Հ., Արցախի Տիգրանակերտի 2013 թ. հնագիտական պեղումների նախնական արդյունքները, ՀՀ, N 3, Երևան, 2014, էջ 246-248:

դդ.: Կենտրոնական թաղամասի IX-XIII դդ. մշակութային շերտերի պեղումներից գտնված հնագիտական մեծաքանակ նյութը թույլ է տալիս խոսել այդ շրջանում միջնադարյան Տիգրանակերտ քաղաքի տնտեսության վառ արտահայտված երկրագործական բնույթի մասին, ինչի քննությունը սույն ատենախոսության հիմնական թեմաներից մեկն է:

Ուսումնասիրության արդիականությունը: Միջնադարյան Արցախի IX-XIII դդ. տնտեսությունը, այդ թվում և գյուղատնտեսությունը, հատուկ գիտական ուսումնասիրության գրեթե չի ենթարկվել: Խորհրդային տարիներին հայտնի պատճառներով Արցախի[3] հնագիտական ուսումնասիրությամբ զբաղվել են առավելապես ադրբեջանցի մասնագետները, որոնց իրականացրած հետազոտությունների արդյունքները հաճախ ակնհայտորեն քաղաքականացված էին և ոչ օբյեկտիվ: Սա վերաբերում է նաև երկրամասի սոցիալ-տնտեսական կյանքին նվիրված հետազոտություններին, որտեղ միջնադարյան Արցախի և Ուտիքի տնտեսությունը ներկայացվել է գերազանցապես արաբ, պարսիկ, թուրք պատմագիրների, ճանապարհորդների երկերի հիման վրա՝ բացառելով հայերի և Հայաստանի մասին հիշատակությունները, հայկական մատենագիր և վիմագիր աղբյուրները[4]: Ուստի Տիգրանակերտի պեղումներից գտնված և գյուղատնտեսությանը առնչվող հնագիտական նյութի ներկայացումն ու քննությունը հայկական և օտար գրավոր աղբյուրների, վիմագիր արձանագրությունների համակողմանի ուսումնասիրության, վերլուծության հիման վրա ունի գիտական կարևոր նշանակություն միջնադարյան Արցախի և մասնավորապես նաև Խաչենագետի ներքնահովտի գյուղատնտեսական պատկերի վերականգնման համար:

Հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները: Նկատի ունենալով վերոնշյալը՝ ներկա հետազոտության հիմնական նպատակն է՝

ա. ներկայացնել միջնադարյան Տիգրանակերտ քաղաքի երկրագործական և անասնապահական տնտեսության ընդհանուր բնութագիրը,

բ. համադրել այն Արցախի միջնադարյան տնտեսության մասին առկա այլ տվյալների հետ,

---

[3]Խոսքն այստեղ գնում է պատմական Արցախի տարածքների մասին, որոնց մի հատվածը ներառվել էր ԼՂԻՄ-ի կազմի մեջ, իսկ մնացած հատվածները՝ Ադրբեջանի ՍՍՀ Աղդամի, Ֆիզուլու, Ջեբրայիլի, Կուբաթլուի, Քելբաջարի, Լաչինի, Զանգելանի, Թերթերի կամ Միր-Բաշիրի, Շահումյանի, Խանլարի վարչական շրջանների կազմի մեջ:

[4]Али-заде А. Социально-экономическая и политическая история Азербайджана, Баку, 1956, с. 49-50, Али-заде А. Некоторые сведения о природных богатствах и занятиях оседлого населения Азербайджана в XIII-XIV вв., Известия АН АзССР, Баку, 1952, N 7, с. 25.

գ. ուրվագծել միջնադարյան Արցախի գյուղատնտեսության ընդհանուր բնութագիրը:

Այս նպատակն էլ պայմանավորել է հետազոտության հիմնական խնդիրները, որոնք կարելի է հանգեցնել հետևյալին.

1. ուսումնասիրել Տիգրանակերտի պեղումներից գտնված և գյուղատնտեսությանն առնչվող կառույցները, աշխատանքային գործիքները, մթերքների պահպանման համար նախատեսված տարողությունները,

2. պեղումներից գտնված աշխատանքային գործիքների, միջնադարյան գրավոր և վիմագիր աղբյուրների, ազգագրական տեղեկությունների հիման վրա ներկայացնել գյուղատնտեսական աշխատանքների պարբերաշրջանն ըստ ճյուղերի՝ հողամշակություն, այգեգործություն և անասնապահություն,

3. ներկայացնել միջնադարյան Տիգրանակերտ քաղաքի երկրագործական տնտեսության առանձնահատկությունները, ի մասնավորի քաղաքի գյուղատնտեսական գոտին,

4. ուրվագծել միջնադարյան Արցախի գյուղատնտեսության բնորոշ կողմերը,

5. հստակեցնել Խաչենագետի ներքնահովտի և Արցախյան հարթավայրի գյուղատնտեսական պատկերը:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>:Ներկա հետազոտությամբ առաջին անգամ փորձ է արվել ուսումնասիրել միջնադարյան Արցախի և նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Խաչենագետի ներքնահովտի գյուղատնտեսությունը՝ գիտական շրջանառության մեջ մտցնելով Տիգրանակերտի հնագիտական հետազոտության տվյալները:

<u>Աշխատանքի կառուցվածքը</u>: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից, նկարների ցանկից և նկարներից:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Ներածություն

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանությունը, ինչպես նաև գրականության համառոտ տեսությունը:

Գլուխ I: Միջնադարյան Արցախի պատմա-աշխարհագրական և տնտեսա-մշակութային միջավայրը

Աշխատանքի այս գլխում համառոտ կերպով անդրադարձել ենք Արցախի աշխարհագրական և պատմական սահմաններին, վարչական բաժանումներին, տվել ենք Արցախի տնտեսական շրջանների ընդհանուր բնութագիրը՝ շեշտը դնելով Արցախյան հարթավայրի վրա: Անդրադարձ է կատարվել Հայաստանի միջնադարյան քաղաքների երկրագործական տնտեսության ընդհանուր կողմերին: Արդյունքում կարելի է նշել, որ

Տիգրանակերտ քաղաքը տեղակայված է Արցախի Մեծիրանից գավառի տարածքում՝ այնտեղ, ուր Արցախի լեռները ձուլվում են տափաստանին: Գրականության մեջ այդ տափաստանը հայտնի է Միլ-Ղարաբաղյան (այժմ Արցախյան) անվամբ: Այն Կուր-Արաքսյան ընդարձակ հարթավայրի կազմի մեջ մտնող տափաստաններից է և ունի ուրույն բնակլիմայական պայմաններ, հողի կառուցվածք, ջրագրություն: Պատմական սկզբնաղբյուրներում Արցախյան տափաստանը հիշատակվում է Ուտիքի դաշտ, Արցախի դաշտ, Մուղան, Առան, Ղարաբաղ և այլ անվանումներով: Խաչենագետի ներքնահովիտը և Արցախյան տափաստանը ըստ Արցախի ուղղահայաց դասակարգման երկրամասի առավել կարևոր բնատնտեսական շրջաններից մեկն է, որը փոխկապակցված է նախալեռնային և լեռնային շրջանների հետ: Սրանցում տնտեսության և մասնավորապես գյուղատնտեսության զարգացումը և բնույթը առաջին հերթին պայմանավորված են եղել իրարից զգալիորեն տարբերվող բնակլիմայական պայմաններով: Արցախյան հարթավայրը ունի մերձարևադարձային չոր, տաք կլիմա, ցածր խոնավություն, իսկ տարեկան տեղումների քանակը Խաչենագետի հովտում կազմում է 350-400 մմ, ինչը Արցախյան տափաստանի մնացած շրջանների և հարևան Միլի և Մուղանի տափաստանների տեղումների քանակի հետ համեմատած շատ է: Արցախյան տափաստանում հիմնականում առկա են կիսաանապատային, անապատատափաստանային[5] գորշ, բաց և մուգ շագանակագույն, ինչպես նաև դարչնագույն տիպի հողեր իրենց ենթատեսակներով: Գետահովտային ցածրադիր մասերում, ինչպիսին է Խաչենագետի ներքնահովիտը, բավականին հզոր շերտով զգալի տարածություններ են գրավում բարձր բերքատվությամբ բնութագրվող նստվածքային, ինչպես նաև մուգ-շագանակագույն հողերը, որոնք նպաստավոր են հատկապես այգեգործության, բամբակի, ինչպես նաև ցորենի, գարու, կորեկի մշակման համար:

Արցախյան հարթավայրում երկրագործության զարգացումն անհնար է առանց ոռոգման առկայության: Տիգրանակերտ քաղաքը գտնվում է Խաչենագետի աջ ափին: Վերջինս Կուրի աջ վտակն է և պատկանում է Արցախի առավել հզոր գետերի շարքին[6]: Խաչենագետի[7] ջրերի հոսքն ըստ

---

[5]Արցախյան հարթավայրի հողերի գյուղատնտեսական նպատակներով օգտագործմամբ պայմանավորված՝ անցած դարի 50-60-ական թվականներին հետազոտվեցին հարթավայրի հողերը, կլիման, ջրային ռեսուրսները, բուսականությունը, մշակվեց ոռոգման ցանցի անցկացման և կառուցման նախագիծ, տարածքը ենթարկվեց գոտիավորման:

[6]Գետի երկարությունը 119 կմ է, ջրհավաք ավազանը կազմում է 657 կմ^2 տարածք: Սնուցումը անձրևային է և ստորերկրյա: Վարարումը մարտ ամսին է, որի ընթացքում էլ ձևավորվում է տարեկան հոսքի 35 %: Գետի տարեկան միջին ծավալը կազմում է 1,83 մ^3/վ, իսկ հոսքը 118,6 մլն մ^3: Գետի խոշոր վտակներից է Քոլատակը: Տես՝ Մնացականյան Բ., Առաքելյան Յու., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու հարակից տարածքների ջրագրությունը ու ջրային հաշվեկշիռը, Երևան, 2005, էջ 71-73:

ուղղահայաց դասակարգման բաժանվում է չորսը շրջանի, որոնցից ստորինը Արցախյան հարթավայրի տարածք մտնողն է: Արցախյան հարթավայրում Խաչենագետ են թափվում Շահբուլաղ (‹‹Արքայական աղբյուր››) կոչվող հզոր[8] աղբյուրի ջրերը[9]:

Միջնադարյան Հայաստանի քաղաքների կյանքում գյուղատնտեսությունը ուներ կարևոր նշանակություն: Խոշոր քաղաքներում (Անի, Դվին, Կարս և այլն) դրանով հիմնականում զբաղվել են արվարձանների բնակիչները, թեև Անիի վիմագիր արձանագրությունները թույլ են տալիս ենթադրել, որ անգամ Անիի պես խոշոր առևտրական, արհեստագործական, վարչական և հոգևոր կենտրոնում գյուղատնտեսությունը ուներ կարևոր դեր: Միջնադարյան Հայաստանի միայն փոքր քաղաքներում և գյուղաքաղաքներում գյուղատնտեսությունը ուներ առաջնային տնտեսական նշանակություն և կրում էր վառ արտահայտված ապրանքային բնույթ:

Սովորաբար միջնադարյան քաղաքների գյուղատնտեսական գոտիները գտնվել են քաղաքների շուրջը: Կարևոր է նաև փոքր քաղաքները և գյուղաքաղաքները բնութագրող չափորոշիչների խնդիրը, ինչը ոչ միայն հայկական, այլ նաև բյուզանդական, արաբական, պարսկական միջնադարյան աղբյուրներում հստակ տրված չէ: Հայկական միջնադարյան աղբյուրներում, ինչպես նշել է Հ. Պետրոսյանը, գյուղաքաղաքի նշանակությամբ հանդես է գալիս ավանը[10]:

Գլուխ II: Երկրագործական մշակույթը

Այստեղ քննության է առնվում Տիգրանակերտ քաղաքի գյուղատնտեսական գոտու մշակաբույսերի հիմնական տեսականին, հողագործական աշխատանքների բնույթը և կիրառվող աշխատանքային գործիքները, քաղաքի ոռոգման համակարգը և այգեգործական պատկերը, գինեգործությունը, փորձ է արվում Տիգրանակերտի հնագիտական հետազոտության նյութերի հիման վրա տեղայնացնել միջնադարյան քաղաքի խաղողի այգիները, դրանց տարածման արեալը: Արդյունքում կարող ենք նշել, որ միջնադարյան Տիգրանակերտում համաձայն հնաբուսաբանական

---

[7]Խորհրդային տարիներին կատարված Արցախի ջրային համակարգի ուսումնասիրության հիման վրա ստեղծվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ մտնող հարթավայրային շրջանների (խոսքը գնում է այն տարածքների մասին, որոնք զբաղեցնում են Արցախյան հարթավայրը) ոռոգման հզոր համակարգը, որը ներառում է Սարսանգի, Մատաղիսի, Խաչենագետի ջրամբարները:

[8]Ջրի ծավալը կազմում է 250 լիտր վայրկյանում:

[9]Зейналов М. Гидрография и водное хозяйство НКАО, Известия АзФАН СССР, Баку, 1939, N 4, с. 104-105.

[10]Պետրոսյան Հ., Միջնադարյան Հայաստանի գյուղաքաղաքի բնորոշման մի քանի կողմերի մասին, Ավանդականի ժառանգման հարցերը հայկական մշակույթում, Երիտասարդ գիտնականների V կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1982, էջ 18-19:

նյութերի[11] մշակել են ցորեն, գարի, կորեկ և որ քաղաքի գյուղատնտեսական գոտում սկսած XI դարից գերակայել է ցորենի մշակությունը: Մշակել են հիմնականում չորադիմացկուն ցորենի և գարու տեսակներ, ինչը պայմանավորված էր Արցախյան հարթավայրի չոր բնակլիմայական պայմաններով[12]: Պեղումներից գտնված երկաթե գործիքներից չորսը խոփեր են, ինչը թույլ է տալիս վերականգնել հողի մշակման ամբողջ գործընթացը:

Հողամշակության աշխատանքների առաջնային փուլերն են հերկն (վարը) ու ցանքսը: Հերկը հողը փորելու գործողությունն է և սովորաբար կատարվել է գարնան վերջերից մինչև ամռան կեսերն ընկած ժամանակամիջոցը և աշնանը: Հերկի ժամանակ գութանի կամ արորի երկաթե խոփը ճեղքում էր հողը, այն փորում, փխրեցնում, շրջում և բացում ակոս:

Պեղումներից գտնված առաջին խոփը սուրանկյուն է, առանց կտրող թևերի և նախատեսված էր հողի կրկնավարի, ինչպես նաև այգիների և բանջարանոցների մշակման համար: Երկրորդ և երրորդ խոփերը սուրանկյուն, աջ և ձախ կողմից կտրող թևեր ունեցող արորի խոփեր են: Չի բացառվում, որ սրանցից երկրորդը եղել է նախագութանի խոփ: Նման խոփերը նախատեսված են եղել հողի հերկի համար և իրենց սուր ելուստներով կտրատել են մոլախոտերը, փխրեցրել հողը: Չորրորդ խոփի ստույգ կիրառությունը դժվար է վերականգնել: Տիգրանակերտից գտնված խոփերը նախատեսված են եղել տափաստանային գոտում աշխատելու համար, պատրաստված են դարբնոցային պայմաններում: Նման խոփեր ունեցող արորին սովորաբար լծել են 1-4 զույգ անասուն[13]:

Միջնադարյան Արցախի նվիրատվական վիմագրերում, պատմական աղբյուրներում հիշատակվում են վարող գործիքները և հողի չափման միավորները: Այս խոփերը ընդհանրություն ունեն նաև արցախյան ազգագրական խոփերի հետ: Կարևոր է նաև Սյունիքի և Արցախի XVII-XIX դարերի վարող գործիքների պատկերներով տապանաքարերի դիտարկումը:

Պեղումներից գտնված մանգաղները (ամբողջական և բեկորային) նախատեսված են եղել հացաբույսերը հավաքելու համար, իսկ առավել փոքրերը թերևս կիրառվել են նաև բանջարաբոստանային կուլտուրաների մշակման համար: Մեծ թիվ են կազմում տարբեր չափի և ձևի սրաքարերը, որոնք հաճախ գտնվում են բնակելի-տնտեսական համալիրներում: Տիգրանակերտի պեղումներից գտնված հնաբուսաբանական նյութը թույլ է

---

[11]Տիգրանակերտ քաղաքի հնաբուսաբանական նյութերի հետազոտությամբ զբաղվում է հնաբուսաբան Ռոման Հովսեփյանը:

[12]Հովսեփյան Ռ., Նախնական տվյալներ Տիգրանակերտի անտիկ և միջնադարյան բուսական տնտեսության և միջավայրի վերաբերյալ, էջ 1 (ձեռագիր հաշվետվություն), Տիգրանակերտի հնավայրի 2013 թ.-ին պեղված և հետազոտված որոշ իրավիճակների նկարագրությունը ըստ հնաբուսաբանական նյութի, էջ 2-3 (ձեռագիր հաշվետվություն):

[13]Պեղող հնագետներ Պետրոսյան Հ., Վարդանեսովա Տ., մաքրումը և վերականգնումը Ա. Մարտիրոսյանի:

տալիս խոսել նաև բերքի զտման որոշակի տեխնոլոգիաների[14] մասին: Տիգրանակերտի բնակելի-տնտեսական համալիրներում հայտնաբերվել են տարբեր չափի բազմաթիվ աղորիքներ: Սրանք սովորաբար մակույկաձև են և սկավառականման: Գտնվել են երկու երկանքի ամբողջական վերին քարերը[15], կրաքարից պատրաստված մեծ ու փոքր սանդեր[16], սանդքարեր, ինչը թույլ է տալիս խոսել հացահատիկային բերքի մշակման և ձավար ու կորկոտ ստանալու մասին: Պեղումներից բացված հորերի մի մասը նախատեսված է եղել հացահատիկի պահպանման համար: Կենտրոնական թաղամասի պեղումներից գտնվել են նաև կտավատի և հաճարի հատիկներ:

Արցախյան հարթավայրում գյուղատնտեսության զարգացումը անհնար էր առանց ոռոգման համակարգի առկայության: Տիգրանակերտի շրջակայքում 2006 թվականին մասամբ պեղվել է ժայռափոր ջրանցքը, որն ունեցել է թունելային հատված: Ջրանցքը սկիզբ է առել Խաչենագետից՝ նրա ավելի բարձրադիր կետից, անցել ժայռափոր քրիստոնեական համալիրի ստորոտով և թեքվել դեպի Տիգրանակերտ[17]: Ըստ XIX դարի տարբեր բնույթի ուսումնասիրությունների՝ Խաչենագետի ներքնահովտում ոռոգման համար հիմնականում օգտագործել են Խաչենագետից անցկացված առուները և քյահրիզ-քանքանների համակարգը:

Արցախի վիմագրերում կան բազմաթիվ հիշատակումներ ոռոգման համար ջուր բերելու մասին: «Բահ ջուրը» եղել է ջրի բաշխման ժամանակ ջրի չափման միավորը, որպես ջրային հարկ մեկ անգամ հիշատակվում է «աբգան» տերմինը:

Միջնադարյան Տիգրանակերտի գյուղատնտեսության կարևոր ոլորտներից էր այգեգործությունը: Հնաբուսաբանական նյութում գերակշռում

---

[14]Հացազգիները հնձելուց հետո նախ կամերի միջոցով կալսել են կալերում, ապա հատուկ երկժանիով հարդն առանձնացրել են ցորենից: Դրանից հետո հատիկն առանձնացրել են հարդից, ինչը կատարվել է երկու փուլով: Նախ փայտե թիակով, քամու օգնությամբ նախնական մաքրման են ենթարկել՝ հատիկն առանձնացնելով հարդից, ինչից հետո հատիկը նորից քամու օգնությամբ մաքրվել է ծանծից: Հետո փոռոցք է արվել, այսինքն՝ ցորենը փռվել է արևի տակ չորանալու համար, որից հետո մաղվել է, պարկավորվել և պատրաստ եղել ալյուր կամ ձավար ստանալու համար:

[15]Վերին քարերը շրջանաձև են, արտաքինից փոքր-ինչ գոգավոր, ունեն 40 սմ տրամագիծ: Վերին աղացաքարը կենտրոնում ունի անցք, որի մեջ մտել է ստորին աղացաքարի լիսեռը ամրացնող երկաթե պահանգը:

[16]Սանդերի մի մասը ուղղանկյուն է, մշակված և հարթեցված է միայն վերին հատվածը, իսկ կողային եզրերը կա՛մ կիսամշակ են, կա՛մ էլ կլորացող, ինչը ցույց է տալիս, որ սանդը մինչև աշխատանքային մակերեսը թաղվել է հողի մեջ: Գտնված սանդերից շատերը ներդրված են եղել բնակելի համալիրների հատակի մեջ, իսկ միջնաբերդում գտնվածները փորվել ժայռի մեջ: Փոքր սանդերը թերևս եղել են շարժական:

[17]Պեղումները Հ. Պետրոսյանի, Լ. Կիրակոսյանի:

են հատկապես թուզը և խաղողը, կան նաև շլորի, նռան կորիզներ[18]: Քաղաքում գինեգործության մասին են վկայում պեղումներից գտնված մեծ ու փոքր կարասների բազմաթիվ բեկորները, ամբողջական օրինակները[19], Արցախում առաջին անգամ վավերացված ժայռափոր հնձանը, որը բաղկացած է խաղողը ճզմելու ժայռափոր, բազմանկյուն հարթակ առագաստից, որտեղ միանգամից կարելի է ճզմել մոտ կես տոննայի հասնող քաղցուն և դարձյալ ժայռափոր հորից, որի տարողությունը 40 լիտր է: Այգեգործական աշխատանքները խաղողուտի պարագայում ներառել են հողի հերկը, առուների բացումը, ինչի համար Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում, ներառյալ և Արցախում օգտագործվել են սուրանկյուն անականջ խոփեր, իսկ ցաքատները, դանակները կիրառվել են էտի, ծառերի պատվաստման, ճյուղերի կտրատման համար: Տիգրանակերտի պեղումներից գտնվել են մեծ քանակությամբ տարբեր տեսակի և չափի դանակներ, որոնց մի մասը անկասկած կիրառվել է այգեգործական աշխատանքների ժամանակ: Ուշագրավ է պեղումներից գտնված ցաքատը, որը բռնակի հետ միասին ունի 22,5 սմ երկարություն: Ցաքատը ունի կեռթիք սայր, ինչպես Գառնիի պեղումներից հայտնաբերված օրինակը: Ցաքատի պոչուկին ամրացվել է փայտե բռնակ, որից պահպանվել է մի փոքրիկ հատված: Փայտե բռնակը ամրացված է եղել գամի միջոցով:

Ըստ նախնական քննության՝ Տիգրանակերտի այգեգործական գոտին[20] տարածվել է Խաչենագետի, նրանից սկսվող ջրանցքի և հարակից տարածքների շուրջը: Որպես քաղաքը շրջապատող այգիների գտնվելու կռվան կարող են դիտվել Կենտրոնական թաղամասից հարավ-արևելք տեղադրված դաշտում՝ Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու հարևանությամբ բացված վաղմիջնադարյան կարասի մնացորդները: Մեկ այլ կարաս էլ գտնվել է Արքայական աղբյուրներից մոտ 150 մ հյուսիս: Իր ձևով և հարդարանքով կարասը պատկանում է IX-X դդ.[21]: Քանի որ պեղման հատվածում կառույցի որևէ հետք չի հայտնաբերվել, հավանական է, որ կարասը հորած է եղել շինություններից դուրս և օգտագործվել է հեղուկ կամ սորուն մթերքներ պահելու համար[22]: Ըստ երևույթին խաղողի մեծաքանակ բերքի վերամշակման

---

[18]Հովսեփյան Ռ., Տիգրանակերտի հնավայրում 2014 թ.-ին կատարված հնաբուսաբանական հետազոտությունների հաշվետվություն (ձեռագիր), էջ 1-2:

[19]Կարասները կարող էին նախատեսված լինել նաև ցորեն և ալյուր պահելու համար:

[20]Այժմ ստույգ դժվար է ասել, թե տոկոսային ինչ հարաբերակցության մեջ էին այգիների և վարելահողերի զբաղեցրած տարածությունները: Բյուզանդական XI-XIII դդ. որոշ հեղինակներ խոսելով համայնքային հողերի մասին՝ դրանք բաժանում են երկու լայն կատեգորիաների: Դրանց մի մասը մշակվող վարելահողերն են, որոնց հակադրվում են այգիները և խաղողուտները: Մշակելի հողատարածքը կարելի է վերածել այգու: Տես՝ Каждан А. Византийское сельское поселение, ВВ, Москва, 1949, т. II, (XXVII), с. 216-217.

[21]Պեղման հատվածում շերտագրական պատկեր չի բացվել:

[22]Պետրոսյան Հ., Արցախի Տիգրանակերտի 2010 թ. հնագիտական պեղումների հիմնական արդյունքները, Գիտական հաշվետվություն, Երևան, 2011 (ձեռագիր), էջ 36:

անհրաժեշտությամբ էր պայմանավորված այգեմիջյան տարածությունում՝ կառույցներից դուրս գինու արտադրության համար նախատեսված կարասների առկայությունը:

Գլուխ III: Անասնապահական մշակույթը

Ատենախոսության սույն գլխում քննության են առնվում հարթավայրային գոտուն բնորոշ անասնապահական տնտեսության առանձնահատուկ կողմերը: Օգտագործելով Տիգրանակերտի պեղումներից գտնված ոսկրաբանական նյութը, հնագիտական գտածոները, Արցախին առնչվող միջնադարյան գրավոր և վիմագրական նյութը, ազգագրական տվյալները, ներկայացվում է միջնադարյան Տիգրանակերտ քաղաքի անասնապահական տնտեսութունը:

Հայաստանում անասնապահության զարգացումը պայմանավորված է եղել երկրի տարածքների գոտիավորմամբ և երկու խոշոր՝ հարթավայրային և լեռնային բնատնտեսական շրջանների[23] առկայությամբ՝ իրենց բնորոշ անասնապահական տնտեսաձևով:

Սովորաբար Արցախի անասնապահական տնտեսությունը ներկայացվել է երկրամասի նախալեռնային, միջինլեռնային և բարձրլեռնային գոտիներում առկա[24] անասնապահական տնտեսաձևի հիման վրա, որը բնորոշվել է որպես արածովի-արոտավայրային[25]:

Ինչպես արդեն նշվեց, Տիգրանակերտ քաղաքը տեղակայված է Արցախյան հարթավայրում: Հարթավայրերում գտնվող բնակավայրերում գերակայում է երկրագործական տնտեսությունը և այստեղ անասնապահությունը սովորաբար երկրագործությանը օժանդակող և սպասարկող տնտեսության ճյուղ է: Սա նշանակում է, որ հարթավայրային գոտում առավելապես գերակայել են որպես քաշող ուժ գործադրվող խոշոր եղջերավոր անասունները, որոնց խնամքը, կերի հայթայթումը մեծապես պայմանավորված է եղել երկրագործական տնտեսությամբ: Հարթավայրային գոտու բնակավայրերում կաթնամթերքի վերամշակումը սովորաբար ուներ երկրորդական նշանակություն:

Հայկական և օտար գրավոր աղբյուրները անասնապահական տեսանկյունից Արցախյան հարթավայրը հիշատակում են որպես անասունների համար ձմեռոց: Առաջին անգամ նման հիշատակություն հանդիպում է Մովսես Կաղանկատվացու (Դասխուրանցի) «Պատմութին Աղուանից աշխարհի» երկում, որտեղ նկարագրելով հոների արշավանքը

---

[23]Սրանք իրենց հերթին բաժանվում են մի քանի գոտու՝ բարձրլեռնային, միջինլեռնային, նախալեռնային, հարթավայրային և տափաստանային:

[24]Գլխավոր պատճառը այդ շրջանների հայաբնակ լինելն էր՝ ի տարբերություն Արցախյան հարթավայրի, որտեղ հայ բնակչություն կրկին հաստատվեց միայն Արցախյան պատերազմից հետո:

[25]Мкртумян Ю. Формы скотоводства в Восточной Армении, с. 45-46.

Աղվանից երկիր, հեղինակը հիշատակում է նրանց կողմից ավարի ենթարկված բազմաթիվ հոտերը և նախիրները, որոնց մեջ եղել են նաև Այրարատյան գավառներից և Սյունիքից եկածները. «…ասպատաւորքն Հոնաց յայսկոյս գետոյն Կուրայ եւ զեզերքքն Երասխայ ոչ միայն զբնաշխարհիկսն, այլ որ զԱյրարատեան գաւառացն եւ ի Սիւնեստանեայց աշխարհէն հաւտք եւ անդեայք ի ձմեռնաճաշակ դաշտն եկեալ էին։ …Եւ դարձուցանէր յաւարէ անտի հարիւր եւ քսան հազար հաւտից եւ եաթն հազար ձիոց եւ արջառոց բազմութիւն…»[26]։ Պատմիչը ընդարձակ հարթավայրը բնութագրում է որպես ձմեռնաճաշակ։ Մյուս կարևոր փաստն այն է, որ Կուր և Արաքս գետերի միջև գտնվող ձմեռոց եկել են նաև Սյունիքից[27] և անգամ Արարատյան երկրից, իսկ սա խոսում է VII դարում Հայաստանում առկա հեռագնա անասնապահության գոյության մասին։ Կաթողիկոս Աբրահամ Կրետացին վկայում է, որ անգամ դեկտեմբեր և հունվարի ամիսներին Մուղանի դաշտում կարելի էր կանաչ խոտ գտնել[28]։

Տիգրանակերտի պեղումներից գտնված ոսկրաբանական նյութի հիման վրա դժվար է ստույգ որոշել Տիգրանակերտի անասունների տեսական փոխհարաբերությունը։ Որոշ տեղամասերում գերակայում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորները, կան նաև թռչնի, ձիու, մանր եղջերավոր անասունների ոսկորներ, ուղտի երկու ատամ։ Անասնապահության հետ ուղղակի և անուղղակի կերպով առնչվում է հնագիտական գտածոների մի մասը։ Երկաթե պայտերի մեջ շատ են խոշոր եղջերավոր անասունների և ձիերի պայտերը, տարատեսակ մեխերը։ Ուղղակիորեն անասնապահության հետ է կապված կաթնամթերքի մշակման համար նախատեսված ձձումների բազմաթիվ բեկորների հայտնաբերումը։ Սրանք պատկանում են նստած դիրքում օգտագործվող ձձումների տիպին։ Անոթները վերի մասում ունեն իրանին հորիզոնական դիրքով միացված բռնակ, որի կողքին արված է ոչ մեծ անցք։ Կարագ պատրաստելու (հարելու) համար ձձումի բերանը լցրել են կաթի սեր կամ մածուն, բերանը պինդ փակել։ Բռնակի մոտի անցքը փակել են հատուկ կափարիչով, որից հետո ձձումը դրել են կողքի վրա, դեմքով դեպի մերողը՝ աշխատանքի ընթացքում պարբերաբար բռնակի մոտ գտնվող անցքը

[26]Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 247-248։

[27]Մինչև խորհրդային կարգերի հաստատումը Սյունիքի Կապանի շրջանի գյուղացիներն իրենց անասուններին քշում էին Արաքսի ափ՝ Ողջիի գետաբերանի մոտ փռված Զանգելանի դաշտ։ Տես՝ Լիսիցյան Ս., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 135։

[28]Աբրահամ Կրետացի, Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ն. Ղորղանյանի, Երևան, 1973, էջ 5։

բացելով և փայտիկի օգնությամբ խտությունը ստուգելով[29]: Որոշակի թիվ են կազմում կաթնամանները, սափորները, կճուճները, երկկանթ կաթսաները, որոնց մի մասը, համաձայն ազգագրական նյութի, անկասկած օգտագործվել է կաթնամթերքի պահպանման համար: Ուշագրավ է Hg 124 քառակուսում 2,40 մ խորության վրա գտնված ջարդված փոքր կճուճը, որի հատակին կար քարացած սպիտակ նյութ՝ ըստ երևույթին պանիր: Ըստ Կենտրոնական թաղամասի շերտագրության այս գտածոն թվագրվում է XI դարով[30]:

Տիգրանակերտի անասնապահական տնտեսության հետ անուղղակիորեն կապված է մեծաքանակ ոսկրե իրերի հայտնաբերումը, ինչպես օրինակ եղջերուի եղջյուրից պատրաստված գորգագործական կտուտիչը, տարբեր տեսակի բռնակները, կիսամշակ և ամբողջությամբ մշակված ոսկրե խողովակները, եղջյուրները, ժանիքները: Անուղղակի կերպով անասնապահության հետ են կապված բազմաթիվ կավե և քարե ծանրոց-կախիկները:

Եզրակացություններ

Ամփոփելով սույն քննությունը, կարելի է ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

ա) Պատմական Արցախի տարածքն ըստ ուղղահայաց դասակարգման բաժանվում է չորսը տնտեսական շրջանների՝ հարթավայրային կամ տափաստանային, նախալեռնային, միջինլեռնային և բարձրլեռնային: Սրանցից յուրաքանչյուրը զարգացման ուրույն պայմաններ ունեցող տնտեսական շրջան է իր հետ փոխկապակցված գյուղատնտեսական գոտիով: Էնեոլիթյան դարաշրջանից սկսած պատմական Արցախի տարածքում երկրագործությունն առավելապես զարգացել է հարթավայրային և նախալեռնային, իսկ անասնապահությունը՝ լեռնային գոտում: Այս երկու գոտիները փոխկապակցված են եղել միմյանց հետ: Տիգրանակերտ քաղաքը գտնվում է հարթավայրային տնտեսական գոտում:

բ) Տիգրանակերտի թե՛ կենտրոնական թաղամասում և թե՛ միջնաբերդի վերին հատվածում բացված բնակելի-տնտեսական համալիրների պեղումներից գտնված հնագիտական նյութում մեծ թիվ են կազմում աշխատանքային տարբեր գործիքները, տնտեսական նշանակության խեցեղենը, կառույցները և հարմարանքները, ինչը ենթադրել է տալիս IX-XIII դդ. Տիգրանակերտում ընդգծված երկրագործական տնտեսության առկայության մասին:

գ) Հիմնվելով Տիգրանակերտի Կենտրոնական թաղամասում 2011-2014 թթ. կատարված հնաբուսաբանական հետազոտությունների տվյալների վրա,

---

[29]Саркисян Е. Гончарное искусство Армении, Ереван, 1978, с. 79.

[30]Շերտագրությունը և թվագրությունը ըստ Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի, կճուճը հայտնաբերել է հնագետ, պ. գ. թ. Տատյանա Վարդանեսովան:

կարելի է փաստել, որ Տիգրանակերտի երկրագործական գոտում X-XIII դդ. մշակել են չորադիմացկուն տեսակներին պատկանող ցորեն, գարի և կորեկ, ինչը պայմանավորված էր Արցախյան հարթավայրի շոգ կլիմայական պայմաններով: Թերևս XI դարից սկսած քաղաքի երկրագործական գոտում գերակայել է ցորենի մշակությունը: IX-XIII դարերում գյուղատնտեսության ոլորտներից առաջնային է եղել հողամշակությունը: Դրա մասին են վկայում նաև քաղաքի երկրագործական տնտեսությանն առնչվող հնագիտական գտածոների մի մասը: Արցախի XIII դարի վիմագիր արձանագրություններում որպես եկեղեցիներին և վանքերին տրվող նվիրատվություն բազմիցս հիշատակվում է «հող» բառը: Այն հանդես է գալիս վարելահող, մշակելի հող, հողամաս նշանակությամբ: Իբրև հողի չափման միավոր քանիցս հանդիպում են «օրավար» (կիսավար) և «լուծ» տերմինները և միայն Արցախի XIII դարի որոշ վիմագրերում հանդես եկող «համադիկ-համատիկ» բառը:

դ) Ուշագրավ է չորսը վարող գործիքների երկաթե խոփերի հայտնաբերումը, ինչը Հայաստանում պեղված երկաթե խոփերի ամենամեծ հավաքածուն է: Չորս խոփերն էլ տարբերվում են իրենց չափերով, տեսքով և օգտագործվել են հողագործական աշխատանքների տարբեր փուլերի՝ հերկոցի, կրկնավարի և ցանքի, ինչպես նաև այգիներում և բանջարանոցներում ոռոգման առուներ բացելու համար: Խոփերը նախատեսված են եղել տափաստանային գոտում աշխատելու համար, իսկ դատելով որոշ խոփերի ձևից, չափերից և աշխատանքային առանձնահատկություններից, չի բացառվում, որ դրանք նախագութանի խոփ են եղել: Տիգրանակերտի հնաբուսաբանական նյութը թույլ է տալիս խոսել բերքի զտման որոշակի գործընթացի մասին: Պեղումներից գտնված ամբողջական մանգաղը և մանգաղների բազմաթիվ բեկորները, տարբեր չափի և ձևի աղորիքներն ու երկանքները, մեծ ու փոքր սանդերը, տնտեսական հորերը թույլ են տալիս ամբողջացնել և վերականգնել գյուղատնտեսական աշխատանքների ողջ գործընթացը:

ե) Միջնադարյան Տիգրանակերտի այգեգործությանը առնչվող հնաբուսաբանական նյութերի մեջ առկա են խաղողի, նռան, թզի կորիզներ: Սրանցից հատկապես գերակշռում են թուզը և խաղողը: Քաղաքի այգեգործության մասին են վկայում պեղումներից գտնված ցաքատը, տարբեր տեսակի դանակները: Սրանք նախատեսված են եղել ծառերի և խաղողի էտի, պատվաստման, ճյուղերի կտրատման համար: Տիգրանակերտում իր տեսակարար կշռով այգեգործությունը հաջորդել է հողագործությանը:

զ) Տիգրանակերտում գինեգործության մասին է վկայում Արցախում առաջին անգամ հայտնաբերված ժայռափոր հնձանը, որը բաղկացած է խաղողը ճզմելու ժայռափոր, բազմանկյուն հարթակ առագաստից, որտեղ միանգամից կարելի է ճզմել մոտ կես տոննայի հասնող խաղողը և դարձյալ ժայռափոր հորից, որի տարողությունը 40 լիտր է: Մեծ թիվ են կազմում

բնակելի-տնտեսական համալիրների պեղումներից գտնված մեծ ու փոքր կարասների բազմաթիվ բեկորները և ամբողջական օրինակները:

է) Տիգրանակերտի և նրա շրջակայքի պեղումները թույլ են տալիս ենթադրել, որ քաղաքի գյուղատնտեսական գոտին տարածվել է Խաչենագետի, նրանից սկսվող ջրանցքի և հարակից տարածքների շուրջը: Դատելով պեղումներից գտնված որոշ կարասների տեղաբաշխումից՝ կարելի է ենթադրաբար վերականգնել Տիգրանակերտի խաղողի այգիների գտնվելու վայրը և այգեգործական գոտու տարածման մոտավոր սահմանները:

ը) Տիգրանակերտ քաղաքը և այն շրջապատող գյուղատնտեսական գոտին ոռոգվել են Խաչենագետից սկիզբ առնող ժայռափոր ջրանցքով, որն ուներ թունելային հատվածներ: Արցախի վիմագրերում, ինչպես և Հայաստանի այլ հնավայրերում, բազմիցս հիշատակվում է ջուր բերելու մասին: Որպես ջրի բաշխման միավոր հիշատակվում է բահաջուրը, իսկ ջրի օգտագործման հարկ՝աբգանը:

թ) Իր բնակլիմայական պայմաններից ելնելով՝ Արցախյան հարթավայրը զուտ անասնապահական տեսանկյունից հայ և օտար պատմիչների կողմից առավելապես հիշատակվել է որպես ձմեռային արոտավայր: Հատկապես կառանձնացնենք Մովսես Կաղանկատվացու վկայությունը: Զարգացած երկրագործությամբ հարթավայրային շրջաններում անասնապահությունը սովորաբար ունեցել է երկրորդական դեր և սպասարկել է երկրագործական տնտեսությունը: Արցախում անասնապահությունը առավելապես զարգացած է եղել միջինլեռնային և բարձլեռնային գոտում, որը հարթավայրային գոտու անասնապահների համար ծառայել է որպես ամառային արոտավայր:

ժ) Տիգրանակերտի ոսկրաբանական նյութի հիման վրա կարելի է փաստել խոշոր և մանր եղջերավոր անասուններից բաղկացած տնտեսության առկայությունը, իսկ որոշ տեղամասերում՝ խոշորների գերակայությունը: Պեղումներից գտնված հնագիտական նյութի մի մասը ուղղակի և անուղղակի կերպով առնչվում է անասնապահական տնտեսությանը: Դրանցից հատկապես կառանձնացնենք կաթնամթերքի մշակման համար նախատեսված ձձումների բազմաթիվ բեկորները, տարբեր չափի կճուճները, կաթնամանները, սափորները: Պեղումներից գտնվել են մեծ քանակությամբ եզան և ձիու պայտեր: Անուղղակի կերպով անասնապահական տնտեսության հետ են առնչվում բազմաթիվ քարե և կավե ծանրոց-կախիկները, ոսկրից պատրաստված կամ կիսապատրաստուկ տարբեր առարկաները, այդ թվում և գորգագործի կտուտիչը: Արցախի վանքերին տրվող նվիրատվությունների մեջ որոշակի տոկոս են կազմել խոշոր եղջերավոր անասունների՝ առավելապես եզների նվիրատվությունները, որոնք հիշատակվում են հողային նվիրատվությունների հետ մեկտեղ:

Ատենախոսության թեմայի վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատությունների ցանկ

1. Հովսեփյան Ռ., Դիտողություններ Արցախի Տիգրանակերտի երկրագործական տնտեսության վերաբերյալ միջին դարերում, Էջմիածին ամսագիր, 2017, Բ, էջ 135-148:

2. Հովսեփյան Ռ., Դիտարկումներ Արցախի Տիգրանակերտի այգեգործական մշակույթի մասին (X-XIII դդ.), ՊԲՀ, Երևան, 2017, N 1 (204), էջ 103-115:

3. Հովսեփյան Ռ., Հացազգիների մշակումը միջնադարյան Տիգրանակերտում, ԼՀԳ, Երևան, 2017, N 1 (649), էջ 261-268:

Овсепян Рубен Леонидович

Сельскохозяйственная культура средневекового Арцаха по материалам археологических раскопок Тигранакерта

Резюме

Арцахский Тигранакерт был основан в I в. до н. э. царем Тиграном Великим (95-55 гг. до н. э.). Территория города распологается в нижнем течении реки Хаченагет, на одной из сравнительно низких возвышенностей склона горы Ванкасар и на впадине близ этого склона, рядом с Царскими родниками (Шахбулаг).

Раскопками на территории города были выявлены многочисленные орудия труда, ёмкости и приспособления для переработки и хранения продуктов, которые позволяют изучить экономику города как в античное время, так и в средневековье. Для изучения средневековой экономики Тигранакерта важное значение имеют раскопки жилых комплексов Центрального квартала города, которые датируются IX-XI и XII-XIII вв. Многочисленные археологические материалы найденные из культурных слоев X-XIII вв. позволяют предположить, что в это время экономика средневекового Тигранакерта имела также ярко выраженный сельскохозяйственный облик.

Географически территория исторического Арцаха разделена на несколько поясов - равнинный, предгорный, среднегорный и высокогорный. Каждый из них является отдельным экономическим регионом с присущим ему типом сельского хозяйства. Город Тигранакерт находится на равнине, где без орошения невозможно развитие сельского хозяйства. В 2006 году в ходе раскопок был найден водный канал, который брал начало из реки Хаченагет. Был раскопан 300 м участок канала, где сохранилась вырытая в скале тоннельная часть.

Судя по археологическим материалам в X-XIII вв. в Тигранакерте преобладало земледелие и в первую очередь обрабатывание зерновых культур (пшеница, ячмень, просо), о чем кроме археоботанических находок свидетельствует также богатый археологический материал, например четыре

железных лемеха, которые являлись лемехами от сох, а один из них, по всей вероятности, по своим техническим характеристикам был близок к плужному лемеху. Все четыре лемеха были предназначены для разных типов работ. Эпиграфический материал из Арцаха дает нам дополнительные сведения как о типах обрабатывающих орудий, так и о средневековых единицах измерения сельскохозяйственной земли. Сопоставив эти археологические и эпиграфические материалы со средневековыми письменными источниками о сельском хозяйстве и этнографическим материалом, можно восстановить почти полную картину сельскохозяйственных работ в Тигранакерте.

После земледелия, в сельском хозяйстве города очень важное место занимало садоводство. Судя по археоботаническим находкам преобладали инжир и гранат, виноград. О производстве вина свидетельствует впервые найденная на территории Арцаха вырубленная в скале давильня. По находкам некоторых карасов можно приблизительно восстановить местонахождение виноградников города и его сельскохозяйственной округи.

Судя по многочисленым находкам кусков керамики и цельных тарр предназначенных для переработки молочных продуктов, а также костяных изделий, грузиков от пряслиц, разных по типу подков, животноводство в Тигранакерте играло важную, но не первостепенную роль. Не исключено, что в сельском хозяйстве Тигранакерта животноводство имело вспомогательную роль и служило лишь для нужд земледелия, т. к. крупный рогатый скот являлся основной тягловой силой.

Ruben A. Hovsepyan

The Agriculture of Medieval Artsakh According to the Results of the Archaeological Research

Summary

Artsakh's Tigranakert was founded in 1st century B.C. by the king Tigran the Great (95-55 B.C.). The city was situated at the left bank of river Khachenaget, at one of the relatively low hills of the mountain Vankasar and in the valley near the slope, next to Royal springs (Shahbulag).

Excavations in the territory of the city brought in numerous work tools, pans and bowls, as well as facilities for processing and keeping products, structures stating about the economics of the city both in ancient and medieval times.

Excavations of the residential complexes of central part of the city, dated back to IX-XI and XII-XIII centuries, have an important role in the study of the economics of medieval Tigranakert. Numerous archaeological artifacts found in the cultural layers of X-XIII centuries let us conclude that during that period the economics of the medieval Tigranakert had an agricultural image.

Geographically, the territory of the historical Artsakh is divided between several zones - flatlands, foothills, midlands and highlands. Each of them is a distinct

economical region and has its own type of agriculture. The city of Tigranakert is situated at the flatlands, where the agriculture could not do without irrigation. During excavations in 2006, a water channel was found which originated from the river Khachenaget. The excavated part of the channel of 300 sq meters had preserved tunnel part which was dug into a rock.

Judging by the archaeological artifacts, during X-XIII centuries agronomy and primarily the cultivation of grains (wheat, barley, millet) prevailed, which is revealed not only through archaeobotanical findings, but also by the rich archaeological artifacts, e.g. four iron ploughshares, which are ploughshares for plows, and one of them is similar to the ploughshare with its technical characteristics.

Each of 4 plows was designed for different types of work. Epigraphic material found in Artsakh provides us with additional facts both about types of processing tools and medieval units of measurement for the agronomical land. By combining all these archaeological and epigraphic findings with the medieval written sources about agriculture and the ethnographic material, we can restore the almost complete image of the agricultural works of Tigranakert.

Besides agronomy, gardening also had an important role in the agricultural life of the city. Judging by archaeobotanical artifacts, fig, pomegranate and grapes prevailed. The first masher carved into the rock which was found in Artsakh states about winemaking practices. Some of the pots found in the area allow us to restore the location of vineyards of the city and its agricultural districts.

Judging by numerous artifact pieces of ceramics and whole pots designed for processing dairy products, as well as bone goods, whorl weights, different types of horseshoes, we can assume that stock raising has an important, but not primary role in the agricultural life of Tigranakert. Possibly, stock raising had a secondary role in the agricultural life of Tigranakert, and only served for agronomical needs as the cattle was the main draft power.